ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(մ. թ. ա. II—մ. թ. II դդ.)

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի անտիկ դարաշրջանի մշակույթի ուսումնասիրությունը կատարվում է անհամաչափ։ Դա վերաբերում է հատկապես տեխնիկային, աշխատանքային գործիքներին, արհեստագործությանը, առանց որի անհնարին է արտադրողական ուժերի զարգացման պատմության ուսումնասիրությունը։ Պատճառներից մեկը գրավոր աղբյուրների պակասն է, մյուսը՝ անտիկ հուշարձանների քիչ ուսումնասիրված լինելը։ Սակայն վերջին տասնամյակներին լայն թափ ստացած հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին մշակույթի տարբեր բնագավառներին վերաբերող նոր նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում մասամբ լրացնելու այդ բացը։

Փայտամշակությունը արհեստագործության չուսումնասիրված բնագավառներից է, իսկ կահույքագործությունը՝ նրա ճյուղերից մեկը, քանի որ, կահույքի հիմնական նյութը փայտն է։ Թեև գրավոր աղբյուրները վկայում են քաղաքային բնակչության կողմից օգտագործվող մասսայական, արքունիքի և վերնախավի ճաշակին համապատասխան պատրաստված գեղարվեստական կահույքի լայն արտադրության մասին՝ սեղաններ, աթոռներ և հատկապես շքեղ բազկաթոռներ, «բազմականներ» կամ «բազմակալներ», որոնց վրա դրվում էին գեղարվեստորեն ասեղնագործված «բարձերը»[1], բայց դրանց տեսքն ու կառուցվածքը մեզ հայտնի չէ։ Ուստի, այս առումով իբրև աղբյուր են հանդես գալիս հնագիտական նյութերը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշատից, Երևանից և Սիսիանի իշխանական դամբարանից հայտնաբերված կահույքի մանրամասները։

Արտաշատի I բլրից հայտնաբերված կահույքի մնացորդները բարդ ձևավորում ունեցող ոտքերի մանրամասներ են՝ կենտրոնական անցքով, տարբեր տրամագծերով օղակներ։ Դրանք պատրաստված են հաստոցի վրա, գտնվել են մ. թ. ա. II—I դդ. շերտից։

Սիսիանի իշխանական դամբարանից (մ. թ. ա. I դար) հայտնաբերված կահույքի մնացորդները ավելի բազմատեսակ են։ Պատրաստված են բրոնզից, մաս առ մաս ձուլելու եղանակով և լավ փայլեցված են (աղ. I)։ Այնուհետև, առանձին մասերը հավաքել են երկաթյա կենտրոնական ձողի վրա, իսկ նրանց միջև մնացած դատարկ տարածությունը լցրել հատուկ շաղախով։ Երկաթյա ձողերը, միացնող դեր կատարելուց բացի, ոտքերին հաղորդել են ամրություն։ Ժամանակի ընթացքում երկաթյա ձողերը ժանգոտվել են և բրոնզյա մասերի ճաքելու և փչանալու պատճառ դարձել։ Վերակազմությունը[2] ցույց է տալիս, որ դրանք ունեն տարբեր տրամագծեր։ Ընդհանուր առմամբ նկատելի են ոտքերի սիլուետների աստիճանական նեղացում, որոնք կտրուկ անցումներով, երբեմն սահունորեն նեղանում են, երբեմն էլ ուռուցիկ ձևեր ընդունում զանգակների, օղակների, հորիզոնական առևակոսների տեսքով՝ ստեղծելով լույս ու ստվերի հարուստ խաղ։ Ոտքերն

---

[1] С. Т. Еремян. Развитие городов и городской жизни в древней Армении.— Вестник Древней истории (ВДИ), 1953, № 3, с. 27—31.

[2] *Սիսիանի և Երևանի կահույքը վերականգնվել է Հայաստանի պատմ. թանգարանի ռեստավրատոր Լ. Սարվազյանի կողմից։*

իրար հետ ամրացվել են Π-ձև բրոնզե լայնակի ձողերով, որոնք հարդարված են ակոսավոր դարդերով։

Երևանից հայտնաբերված կահույքի ոտքերի, ուռուցիկ մասերի տրամադրերը փիլ ավելի են և նույնպես ունեն նման բարդ ձևավորում (աղ. II, 2)։



Աղ. I

Սիսիանից հայտնաբերված կահույքի մյուս մասերը համեմատաբար փոքր արամադրեր ունեն։ Դրանք փայտե ձևավոր միջուկի վրա փաթաթված բրոնզե թիթեղներ են, որոնց վրա պահպանվել են մեխերի անցքերը։ Մեզ են հասել նաև փայտյա միջուկի առանձին հատվածներ, որոնք պատրաստված

են հաստոցի վրա։ Վերջիններս, ամենայն հավանականությամբ, բազմոցի (թախտի, մահճի) և բազկաթոռի առջև դրվող ցածր աթոռի ոտքեր են։

Կահույքի արտաքին տեսքի վերաբերյալ պատկերացում են տալիս Արտաշատից, Գառնիից և Արմավիրից հայտնաբերված կավե արձանիկները, որոնց վրա պատկերված են նման և այլ տիպի բարդ ձևավոր ոտքերով թախտեր, բազկաթոռներ և ցածր աթոռներ։ Այդ տեսակետից ուշագրավ են մոր ու մանկան կավե արձանիկները, որտեղ կինը նստած է ձևավոր ոտքերով բարձր բազկաթոռին, կնոջ ոտքերի տակ դրված ցածր աթոռը նույնպես ձևավոր ոտքեր ունի[3]։ Որոշ օրինակների վրա աթոռիկ կա նաև կնոջ ձախ կողքին կանգնած երեխայի ոտքերի տակ[4] (աղ. II, 3)։



Աղ. II

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում բարձր թախտին նստած մոր ու մանկան արձանիկը, կիսապառկած տղամարդու, իսկ երբեմն նաև թախտի կողքին ցածր աթոռին կանգնած երեխայի հետ միասին[5]։ Թախտերն ունեն ձևավոր հաստ ոտքեր, որոնք վերևից ներքև նույն լայնության են։ Հորիզոնական առևակոսներով ոտքերի կենտրոնական լայն գոտին հարդարված է ծաղկաշղթայաձև զարդերով (տղ. IV, 2—4,6)։

Թախտին նստած և կիսապառկած տղամարդու պատկերով Արտաշատից և Գառնիից[6] հայտնաբերված մի այլ խմբի կավե արձանիկների վրա թախտի

3 Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան.—«Երաբեր հասարակական գիտություններ», 1977, № 5, տախտ. I, 1, 3, 8։ Նույնի՝ Անահիտ դիցուհու պաշտամունքն ու պատկերագրությունը Հայաստանում և նրա աղերսները հելլենիստական աշխարհի հետ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, աղ. I, 4, 5։

4 Ж. Д. Хачатрян. Об античной коропластике Армении.—ВДИ, 1979, № 3, табл. I, 3; Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտեր (1971—1977 թթ. պեղումները). Երևան 1981, տախտ. XXII, 5։

5 Ժ. Դ. Խաչատրյան. Անահիտ դիցուհու պաշտամունքը Հայաստանում, նկ. 1, 2. I_6։

6 Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան, տախտ. II_2։

ոտքերը ձևավոր են, բայց առանց կենտրոնական գոտու ծաղկաշղեղաձև զարդի (աղ. IV, 5, 7)։ Այսպիսով, Արտաշատից, Սիսիանի իշխանական դամբարանից և Երևանից հայտնաբերված կահույքի մնացորդները բ–խոզի, բաղկաթոռի, բարձր աթոռի և նրանց առջև դրվող ցածր աթոռի մանրամասներ են (աղ. II, 1, 2, III, 1, 3)։ Ինչպես հայտնի է, կավե արձանիկների վրա պատկերված են աստվածներ և աստվածացված հերոսներ, ուստի կասկածից վեր է, որ վերոհիշյալ հայտնագործությունները նույնպես վերնախավի կողմից օգտագործվող, հանդիսավոր, շքեղ կահույքի մանրամասներ են։

Հայաստանից հայտնի են նաև այլ տիպի շքեղ կահույքի սասեր։ Դրանք բրոնզե երկու քանդակ են, որոնք պատահաբար հայտնաբերվել են Մրենում և հանդիսանում են փայտե մահճի (աղ. IV, 1) գլխատեղի ձախ կողմի երևսապատման թիթեղի մասերը[7]։ Քանդակներից մեկն իր ձևով ներքևի մասի մեդալիոն է, որտեղ պատկերված է թևավոր կնոջ ռելիեֆ էլիսանդրի (բարձր. 8,7 սմ, լայն. 6,9 սմ)։ Մյուսը, որը ծավալային է, եղել է գլխատեղի վերին մասում, իրենից ներկայացնում է շան գլուխն ու վիզը (նկ. 1, 2)։ Երկու քանդակն էլ ներսից դատարկ են և ձուլված են կաղապարի մեջ, այսպես կոչված «մոմե մոդելի կորսայան» եղանակով, որից հետո որոշ մանրամասներ ենթարկվել են լրացուցիչ մշակման (թևերը, աչքերը, ականջները, բաշը, բուրդը և այլն)։ Քանդակներն իրար են միացել երկու նեղ (2,8—3,0 սմ) ժապավեններով, որոնք ֆիգուրների մեջքի մասում աղեղնաձև հեռանում են և նրանց վրա մեխի համար թողնված անցքեր կան[8]։

Այդպիսի ոսկեզօծ քանդակներով զարդերը կիրառական արվեստում լայն տարածում են ստացել հելլենիստական շրջանում, երբ կահույքը հաճախ էր հարդարվում այդ եղանակով[9]։ Մահճեզը, որին պատկանում է Մրենի բրոնզե հարդարանքի մասը, հելլենիստական շրջանի ծնունդ է, որը մի շարք փոփոխություններ կրելով գոյատևել է մինչև մ. թ. II—III դդ.[10]։ Այդպիսի մահճեզներ հայտնաբերվել են Արայուխովյան կուրգանից, Պրիենայից, Պելլայից և այլ վայրերից, որոնք կապող օղակ են հունական և հունահռոմեական մ. թ. ա. I—մ. թ. I դդ. մահճեզների միջև[11]։ Վերջիններս վերին մասում զարդարվում էին կենդանիների (ձիու, առյուծի, շան, թռչնի և այլն) գլուխներով[12], ինչպես Մրենինը։ Ենթադրվում է, որ Մրենի մահճեզի էլիսանդրին պատկերում է Արտեմիս-Հեկատեին, այն պատրաստված է Հայաստանի արևմտյան քաղաքներից մեկում ապրող վարպետի կողմից և պատկանում է մ. թ. II դարի երկրորդ կեսին[13]։ Փոքր Ասիան, Միլեթը և Քիոսը V—IV դդ. եղել են մահճի պատրաստման հայտնի կենտրոններ[14], սակայն, ավելի ուշ շրջանի մահճեզներ համեմատաբար քիչ են հայտնի։ Դատելով Հայաստանից հայտնաբերված վերոհիշյալ կահույքի բրոնզե մասերից (Սիսիան), ինչպես նաև կա-

---

[7] Р. В. Кинжалов. Два бронзовых предмета из Мрена.—Известия АН АрмССР, 1959, № 5, с. 69—81, табл. 1, I—2, II, I—2.

[8] Նույն տեղում, էջ 72—73։

[9] E. Pernice. Hellenistische kunst in Pompeji. Berlin—Leipzig, 1932, Bd. 5, Taf. 53, 54; G. M. A. Richter. Ancient Furniture. Oxford, 1926, p. 131, fig. 312; М. И. Максимова. Артюховский курган, Л., 1979, с. 98.

[10] G. M. A. Richter. Op. cit., S. 57, Abb. 307; Th. Wiegand, H. Schrader. Priene. Berlin, 1904, S. 373—375; М. И. Максимова. Указ. соч., с. 98.

[11] Н. И. Сокольский. Деревообрабатывающее ремесло в античных государствах Северного Причерноморья. М., 1971, с. 92.

[12] Նույն տեղում, էջ 100։ C. L. Ransom. Couches and Beds of the Greeks, Etruscans and Romans. Chicago, 1905, p. 83, Tabl. XI, XV; G. M. A. Richter. Op. cit., fig. 308—312, 314.

[13] Р. В. Кинжалов. Указ. соч., с. 73, 81.

[14] C. Ransom, Op. cit., p. 74.

վե արձանիկների վրայի պատկերներից, Հայաստանին բնորոշ են եղել թախտերը, որոնք հատուկ պատրաստված գլխատեղ չունեն, դրանց փոխարեն օգտագործվել են ճոխ բարձեր։ Համաձայնվելով հանդերձ Մրենի մահիճի տեղական արտադրանք լինելու հետ, ավելացնենք, որ այն լրիվ ընդօրինակված է փոքրասիական մահիճներից։ Ըստ որում, ոչ միայն մահիճի ձևն է ընդօրինակված, այլև գլխատեղի կողքերի երեսապատման մետաղի քանդակները։ Տեղական լինելու օգտին է խոսում կնոջ դեմքը և նրա մանրամասների պակաս մշակվածությունը, համեմատած կիսանդրու մյուս մասերի հետ, որը բնորոշ է նաև Հայաստանի անտիկ շրջանի կավե արձանիկներին և վաղ միջնադարյան քանդակին։ Ինչ վերաբերում է թվագրմանը, ապա եղած փոքրասիական զուգահեռները հիմնականում մ. թ. ա. I—մ. թ. I դդ. են։ Այդ նույն ժամանակին են պատկանում նաև Մրենի մահիճի քանդակ-



Աղ. III

ները։ Կնոջ սանրվածքը չի խանգարում այդ թվագրմանը, քանի որ այն հանդիպում է նաև հելլենիստական շրջանի (մ. թ. ա. II դար) կավե արձանիկների վրա և այլն։ Ուշագրավ է, որ Մրենի մահիճի նման մահիճները նույնպես ունեն բրոնզե ձևավոր ոտքեր։

Հ. Ս. Բեյքերը, ուսումնասիրելով կահույքի ծագումն ու զարգացումը (մ. թ. ա. 3100—475 թթ.), եգիպտական, հունական, մերձավորարևելյան կահույքի ձևերը, պատրաստման տեխնիկան, գտնում է, որ բարդ ձևավոր ոտքերով կահույքը սկսում է ձևավորվել մերձավորարևելյան ռեգիոնում, Միջագետքում։ Դրանց նախատիպերը՝ բարձր աթոռ, թախտ, ոտքերի տակ դրվող ցածր աթոռ և այլն, երևան են գալիս մ. թ. ա. XIII—XII դդ. Միջագետքում[15]։ Մ. թ. ա. VIII դարի նման կահույք գտնվել է Ասորեստանից (Նինվեից)[16], մ. թ. ա. VII—V դդ. աթոռ և թախտ՝ Պաղեստինից[17] (պահվում է

[15] H. S. Baker. Furniture in the ancient world. Origins, evolution 3100—475 B. C. New York, 1966, p. 216—217, fig. 349.

[16] Նույն տեղում, էջ 224։

[17] Նույն տեղում, նկ. 361—362։

Հորդանանի թանգարանում)։ Միջագետքյան, ասորեստանյան ավանդույթները շարունակվում են Աքեմենյանների օրոք։ Պերսեպոլսի գանձարանի և սյունադարդ դահլիճի բարձրաքանդակների վրա Դարեհ Մեծը (I) և Քսերքսես I-ը պատկերված են բարդ ձևավոր ոտքերով գահին նստած և ոտքերը ցածր աթոռին դրած[18]։

Այդ նույն պատկերը նկատվում է նաև Հունգարացի գիտնական Դ. Կեսի[19] աշխատության մեջ, որտեղ կահույքի ծագումն ու զարգացումը ավելի լայն ֆոնի վրա է քննարկվում։ Ըստ Դ. Կեսի, ասուրա-բաբելական կահույքը հարդարվել է բուսական և կենդանական, ինչպես նաև հորիզոնական, ուղղաձև ոսկե և բրոնզե դարդերով։ Պարսիկները, նվաճելով այդ երկրները, կահույքի ինքնուրույն ոճ չստեղծեցին, այլ շարունակեցին ասուրա-բաբելականը, սակայն ավելի շքեղ հարդարանքով[20]։

Քսենոֆոնից հույների վերցրած ավարի մասին խոսելիս, Հերոդոտը (IX, 80, 82) հիշատակում է նաև ոսկե ու արծաթե, ոսկեջրած ու արծաթաջրած մահճեր (թաֆտ) և սեղաններ։

Սելևկյան դրամների վրա պատկերված Բիկնակով և առանց Բիկնակի գահերը վկայում են հելլենիստական շրջանում կահույքի այդ ոճի ավանդույթների շարունակվելու մասին[21]։ Անտիոքոս II-ի և Սելևկոս II-ի Շոշում կարված դրամների երկրորդ երեսին Զևսը պատկերված է այդպիսի գահի վրա նստած[22]։ Ամոտրիսի մ. թ. ա. 300—285 թթ. թվագրվող քաղաքային դրամների երկրորդ երեսին Զևսը նորից պատկերված է նման գահին նստած[23]։ Հելլենիստական շրջանի բարդ ձևավոր կահույքի ոտքեր և մասեր են հայտնաբերվել Այ Խանումից[24]։ Միրինայի կավե արձանիկների վրա պատկերված են նման ոտքերով գահավորակներ, մահճեր և նրանց առջև դրվող ցածր աթոռներ[25]։

Բարդ ձևավոր ոտքերով կահույքի աքեմենյան ավանդույթները շարունակվել են նաև Պարթևստանում։ Այդ մասին են վկայում Մասջիդ-ի Սոլեյմանի մեծ տաճարից հայտնաբերված, բարդ ձևավոր (զուգահեռներով և օղակներով) բրոնզե ոտքերի մասերը[26], բրոնզե ոսկեզօծված նույնանման ոտքերի մանրամասները՝ գտնված Շամիի դամբարանից[27] (մ. թ. ա. II դար), որոնք ենթադրվում է, պատկանել են շքեղ թախտի, որը հետագայում օգտագործվել է իբրև թաղման մահճ, փղոսկրե շքեղ կահույքի մանրամաս-

---

[18] Նույն տեղում, էջ 326, նկ. 368; E. E. Schmidt. Persepolis I, Chicago. 1953. pl. 77—78, 96—98, 104—111, 119—123.

[19] Д. Кес. Стили мебели. Будапешт, 1981, с. 5—31, табл. 5, 61—75.

[20] Նույն տեղում, էջ 30—31։

[21] H. Seyrig. Trésors du Levant Anciens et Nouveaux, II. Paris, 1973. pl. 9, 5, 1—5. 10, 41, 42; 10, 5—18, 19, 21—22.

[22] G. Rider. Suse, sous les Seleucides et les Parthes. Les trouvailles monétaires et l'histoire de la ville. Paris, 1965, pl. II, 1, 13, 15

[23] E. Babelon et Th. Reinach. Recueil général des monnaies grecques d'Asie Mineure. T. I, Pont et Paphlagonie. Paris, 1925. pl. XVIII, 1, 2, 4—6.

[24] H. P. Frankfort. Fouilles d' Ai Khanoum, III. Memoires de la délégation Archéologique Française en Afganistan, T. XXVII. Paris, 1984. p. 107—110, pl. I, 4—24.

[25] E. Pottier et S. Reinach. La necropole de Myrina. Paris, Thorin. 1887, vol. 2, pl. XXXIII, XXXVI, XL.

[26] R. Ghirshman. Terrasses sacrees de Bard-e Néchandeh et Masjid-i Solaiman. Mission de Susiane Memoires délégation archeologique in Iran, T. XLV, vol. I, II, Paris, 1976, pl. 60g. Mis. 250, 259, 285, 289.

[27] A. Stein. Old Routes of Western Iran, London, 1940, p. 141—143, pl. VI.

ները՝ հայտնաբերված Պարթևական Նիսայից, որոնք, ինչպես վերակազմությունն է ցույց տալիս, եղել են գահավորակի և թախտի մասեր և ըստ Գ. Ա. Պուգաչենկովայի, պատկանել են Միհրդատ I-ին[28] (մ. թ. ա. 171—138 թթ.)։

Միհրդատ II-ի (մ. թ. ա. 123—88 թթ.) դրամների երկրորդ երեսին Արշակը պատկերված է այդպիսի բարդ ձևավորում ունեցող ոտքերով գահավորակին նստած[29], իսկ Հրահատ III-ից (մ. թ. ա. 70—57 թթ.) սկսած, հենց իրենք թագավորներն են պատկերված նման գահավորակին նստած[30]։

Հռոմեացիներն ընդօրինակել են հունական կահույքը, սակայն դրանք հարդարել են փայտե և մետաղե գեղակերպ (պլաստիկ) զարդաձևերով։ Ի



Նկ. IV

[28] Г. А. Пугаченкова. Трон Митридата I из парфянской Нисы.—ВДИ, 1969, № 1, с. 161—171, рис. 1—9.

[29] Նույն տեղում, էջ 164—165, նկ. 6 б։

[30] Նույն տեղում, նկ. 6 в г; J. de Morgan. Manuel de numismatique orientale. Paris, 1923—1936, pl. 143, 3, 5—9, 12—14, p. 141. pl. 180—182, p. 168—170.

տարբերություն հունականի, որոշ տեսակի աթոռներ և մահճակալներ ունեն գանգակաձև, օղակաձև և այլ բարդ ձևերի բրոնզե ոտքեր։ Ենթադրվում է, որ դա ձույկոյ Էտրուսկյան տեխնիկայի ազդեցության արդյունք է։ Հաշվի առնելով, սակայն, դրանց պատրաստման ժամանակը և այն, որ այդպիսի ոտքերով կահույքն արևելքում վաղուց էր հայտնի, կարելի է մտածել, որ ոտքերի այդ ձևերը վերցվել են արևելյան կահույքից։

Անտիկ շրջանում կահույքը պատրաստվում էր փայտից, քարից, մետաղից և ոսկուց։ Վերջիններս կրկնում էին փայտյա կահույքի ձևերը։ Քարե կահույքը հանդիսավոր բնույթ ուներ և տեղադրվում էր հասարակական շենքերում ու հարուստների տներում[32]։ Ճիշտ է, VII—IV դդ. Մերձավոր Արևելքում[33], Հունաստանում[34] և Էտրուրիայում[35] կահույքի մեջ օգտագործում



Նկ. 1

էին մետաղյա դարդեր, սակայն կահույքի մեջ մետաղյա մասերի ու զարդերի օգտագործումը լայն տարածում ստացավ միայն հելլենիստական շրջանում[36]։ Իսկ ուշ հելլենիստական շրջանից սկսվում է նաև մետաղյա կահույքի արտադրությունը, որի վառ ապացույցն է նաև Հայաստանից հայտ-

---

[31] Д. Кес. Указ. соч., с. 53—55, таб. 11, 149, 150, 152, A. de Ridder. Les bronzes antiques du Louvre. T. II, Paris, 1915, pl. 119, 3673; G. Richter. Ancient Furniture. A History of Greek, Etruscan and Roman furniture. Oxford. 1926, fig. 299, 308—310.

[32] В. Д. Блаватский. Мраморный трон из Пантикапея.—Советская археология, 1957, № 2, с. 249; L. Durm. Die Bankunst der griechen. Leipzig, 1910, S. 463.

[33] H. S. Baker. Op. cit., p. 214, fig. 361, 362; Д. Кес. Указ. соч., с. 29—31.

[34] Д. Кес. Указ. соч., с. 46; Н. И. Сокольский. Деревообрабатывающее ремесло в античных государствах Северного Причерноморья. М., 1971, с. 87—89.

[35] Д. Кес. Указ. соч., с. 50.

[36] C. Robinson. Couches and beds of the Greeks, Etruscans and Romans. Chicago, 1905, p. 42, 50—51; Н. И. Сокольский. Указ. соч., с. 87, 92, 112.

նաբերված վերոհիշյալ կահույքը։ Իբերների թագավորը որպես նվեր Պոմպեսին ուղարկում է ոսկե մահիճ, սեղան և գահ[37]։

Քարե և մետաղե կահույքի կիրառությունն ավելի լայն տարածում ստացավ մասնավորապես Դելոսում[38] և Իտալիայում[39], հանրապետության վերջին և վաղ կայսրության շրջանում։ Սակայն մ. թ. I դարում աստիճանաբար մոդայիկ դարձավ փայտյա կահույքը[40]։ Պլինիոսը թվարկում է մի շարք ծառատեսակներ, որոնցից պատրաստում էին կահույքը[41]։ Այդ ժամանակ տեխնիկան այնքան էր զարգացել, որ կահույքը պատրաստում էին ավելի էժանագին փայտից, իսկ ավելի թանկարժեք փայտի ֆաներայով երեսապատում։ Պլինիոսի թողած տվյալներից դատելով հին Հռոմում հյուսները ուներ այսօր օգտագործվող գրեթե բոլոր գործիքները[42]։

Հայաստանում նույնպես կահույքի գյուտերը նորություն չեն։ Ամենահին հայտնագործությունները վերաբերում են ուշ բրոնզի շրջանին։ Դրանք գտնվել են Լճաշենի դամբարաններից և համարվում են թաղման մահիճներ[43]։ Այդ մեծ ուղղանկյուն թախտերը կլոր ոտքեր ունեն և հյուսված կաշեփոկերով նստատեղեր (1,2—1,5 մ, 0,6—0,8 մ)։ Նմանատիպ թախտեր հայտնի են նաև Ցամաքաբերդի, Արթիկի[44], Ռեդկին լագերի[45] դամբարաններից։ Ռեդկին լագերից գտնված մահիճի կարճ ոտքերը քառակուսի են (բարձր. 20 սմ, երկ. 1, 23 մ, լայն. 60 սմ)։ Օշականի[46] վաղ երկաթի շրջանի դամբարանից (№ 78) հայտնաբերված բազկաթոռի ձևն այլ է։ Ցածր ոտքերը վերևում քառակուսի են, դեպի ներքև կլորանում և հաստանում են (55×77 սմ)։ Նստատեղին ցանցաձև գործած կաշեփոկից է եղել։ Ուշագրավ այս բազկաթոռը նույնպես համարվում է թաղման մահիճ[47]։

Ուրարտական շրջանի կահույքին վերաբերող նյութերն ավելի առատ են։ Կարմիր բլուրում գտնվել են վառված փայտե աթոռների մնացորդներ, որոնց միայն վերին մասի և կենտրոնականի բրոնզե հատվածներն են մեզ հասել[48]։ Խոշոր, շքեղ գահի բրոնզե, ոսկեզօծ, կենդանակերպ և այլ տիպի քանդակներով հարդարված[49] ոտքեր են հայտնաբերվել Թոփրախ կալեից[50], Կայալի դերեից[51] և այլ հնավայրերից։ Ուրարտական բազկաթոռների (գահերի)

---

37 Плутарх. Помпей, XXXVI.—Сравнительные жизнеописания, т. II, М., 1963 (пер. Г. А. Стратановского).

38 W. Deonna. Le mobilier delien. „Delos", XVIII, Paris, 1938, S. 1—63. Plin Nat. Hist., XXXII, 144, 151; XXXIV, 4. 9.

39 Н. И. Сокольский. Указ. соч., с. 87; М. Е. Сергеенко. Ремесленники древнего Рима. Л., 1968, с. 30.

40 М. Е. Сергеенко. Указ. соч., с. 30—33.

41 Plin., Nat. Hist., XVI, 231—233.

42 Նույն տեղում։

43 А. О. Мнацаканян. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г.— СА. 1957, № 2, с. 147.

44 Т. С. Хачатрян. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, с. 23.

45 F. Bayerns. Untersuchungen über die ältesten, gräber- und Schatzfunde in Kaukasien, Berlin, 1885, S. 13.

46 С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан, I. Основные результаты раскопок 1971—1983 гг. Ереван, 1988, с. 103—104, 123, табл. CXIX—CXX.

47 Նույն տեղում, էջ 104, տախտ. CXVIII։

48 Б. Б. Пиотровский. Искусство Урарту VIII—VI вв. до н. э., Л., 1962, с. 54, рис. 25.

49 Նույն տեղում, էջ 45—54, նկ. 11—24։

50 Նույն տեղում, էջ 44։

51 C. A. Barney. A first season on Excavations at the Urartian citadel of Kayalidere. „Anatolian Studies", vol. XVI, 1966, p. 96, fig. 20, 1.

մասին մեզ պատկերացում են տալիս նաև Թոփրախ կալեից հայտնաբերված ոսկի մեդալիոնը և արծաթյա լուսնաձև կրծքազարդը, ինչպես նաև Կարմիր բլուրից գտնված արծաթյա մեդալիոնը, որոնց վրա պատկերված տեսարաններում աստվածուհին նստած է գահին[52]։ Աչգպիսի շքեղ գահավորակներ պատկերված են նաև ասորեստանյան հուշարձանների վրա, որտեղ նույնպես նստածները թագավորներ են կամ աստվածներ[53]։ Ուշագրավ է, որ Սարգոնի պալատի պատին պատկերված Մուսասիրի տաճարի բալանի տեսարանում, պատվանդանի ոտքերն ասորիճանաբար բարակում են և ունեն հորիզոնական շրջանաձև ողակներ[54]։ Սարգոն II-ի Աշուր աստծուն գրած նամակում խոսելով Մուսասիրից վերցրած ավարի մասին (714 թ.), նշում է նաև փղոսկրի մահճակալի, ոսկով և քարերով հարդարված արծաթե մահճի, 10 սեղանի, սև փայտի բազկաթոռի մասին[55]։

Վաղ հայկական շրջանի կահույքի գյուտեր մեզ հայտնի չեն, սակայն կահույքի մասին տեղեկություն է հաղորդում Քսենոփոնը իր «Անաբասիսում»։ Նա վկայում է, որ երբ հույները գրավեցին Տիրիբազոսի վրանը, նրա մեջ այլ իրերի թվում ավար վերցրեցին նաև «արծաթե ոտքերով մահճաներ և բազկաթոռներ»[56]։ Նշված մահճակները (թախտեր), ամենայն հավանականությամբ, ունեցել են արևմտյան կահույքի ձևերը և հարդարված են եղել նույն ելքնակով։

Արաշատից, Սիսիանից, Երևանից, Մրենից հայտնաբերված կահույքի մանրամասները և կավե արձանիկների վրայի կահույքի պատկերները բնորոշում են մ. թ. ա. II —մ. թ. II դդ. միջև ընկած ժամանակաշրջանի շքեղ կահույքի մի քանի տեսակը։ Միկնակով գահը, ինչպես վերը տեսանք, ուրարտական շրջանում արդեն ընդունված է եղել։ Սիսիանի գահավորակը բազկաթոռ է, իսկ Երևանինը՝ արմունկները հենելու հորիզոնական ձողեր չունի։ Ինչ վերաբերում է Հայաստանում գտնված վերոհիշյալ կավե արձանիկների վրա պատկերված գահերին, ապա դրանք բազկաթոռներ են, սակայն պատկերների ճակատային լինելու պատճառով նրանց մանրամասները հստակ չեն, ուստի նրանց կառուցվածքն ուսումնասիրել դժվար է։

Մովսես Խորենացին Արտաշեսի Բաղման կապակցությամբ նշում է, որ «դղեղարն էին, ասէ, ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեղեայ և պատմուճանն որ մարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէն ոսկով տոպի եղեալ և զդահոյիւրն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն...»[57]։ Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատը արքունիքից ոսկեջրած գահավորակներ է ուղարկում Հռիփսիմեին (III դար)։ «Եւ անդէն յարքունատ վաղվաղակի ոսկեզարդ գահաւորակս սպասաւորք հանդերձ հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք նոցա արտաքոյ քաղաքին»[58]։ Հայաստանի վերոհիշյալ գահերը իրենց ձևերով նման են, հատկապես սելևկյան դրամների վրայի գահերին։ Վերջիններս ավելի ցածր են, չունեն արմունկներն հենելու մասեր, ուստի նրանց առջև ոտքեր դնելու համար ցածր աթոռ չի դրվել[59]։

Կարմիր բլուրում գտնված աթոռի գյուտից երևում է, որ Սիսիանի տիպի բարձր աթոռները վաղուց էին գտնվում կիրառության մեջ։ Այն իր

---

52 Б. Б. Пиотровский. Искусство Урарту. с. 84—85, рис. 48—50.

53 Б. Б. Пиотровский. Ванское царство (Урарту). М., 1959, с. 172.

54 Б. Б. Пиотровский. Искусство Урарту, рис. 10.

55 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—ВДИ, 1951, № 2, с. 332.

56 Քսենոփոն. Անաբասիս (Թարգմ. Ս. Կրկյաշարյանի). Երևան, 1970, IV, IV, 20, 21։

57 Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1991, II, 9։

58 Ագաթանգեղայ. Պատմութիւն Հայոց. Երևան, 1983, § 166։

59 Г. А. Пугаченкова. Указ. соч., рис. 6 б, в, г; 8.

աղերսներն ունի Պոմպեյից և այլ վայրերից հայտնաբերված հռոմեական աթոռների[60] հետ (մ. թ. ա. II—մ. թ. I դդ.)։

Գահը, բազկաթոռը, եթե հիմնականում հանդիսավոր-պաշտոնական քնդունելությունների համար էր, ապա թախտը (մահիճը) կահույքի ամենաանհրաժեշտ տեսակներից մեկն էր։ Սիսիանում գտնված թախտը, ճիշտ է, բավականին շքեղ տեսք ունի, սակայն կավե արձանիկների մի խմբի վրա պատկերված թախտն ավելի շքեղ է, նրա ոտքերի կենտրոնական գոտին հարդարված է ծաղկեշղթայաձև զարդով։ Բուսական զարդը թեև տարածում է ստանում հելլենիստական շրջանում, բայց այն Օգոստոսի էպոխայի հիմնական օրնամենտներից էր[61]։ Թախտը տարածված էր Հին Արևելքում, Հունաստանում, Իտալիայում և այլուր։ Այն ոչ միայն շքեղ կահույք էր, այլև օգտագործվում էր հանգստանալու, քնելու, ճաշելու, խնջույքների ժամանակ (ինչպես Արտաշատի կավե արձանիկներից մեկի վրա, որտեղ կիսապառկած տղամարդու ձեռքին կանթարոս կա)։ Հույները հանգուցյալին տնից մինչև գերեզման տանում էին մահիճի կամ դիակառքի վրա և դրանով էլ թաղում[62]։ Լճաշենի, Արթիկի, Յամաքաբերդի, Ռեդկին լագերի և Օշականի թաղման ձևերից դատելով կարելի է ենթադրել, որ այդ սովորությունը եղել է նաև Հայաստանում։ Սիսիանի դամբարանում դիակիզումից հետո մոխիրը լցրել են կավե դագաղի մեջ և դրել թախտին։ Թախտը Արևելքում օգտագործվում էր նաև պետական կարևոր որոշումներ ընդունելիս (նրա վրա կիսապառկած վիճակում)[63]։

Թանգ-ի Սարվակի մ. թ. 200 թ. թվագրվող պարթևական բարձրաքանդակի վրա պատկերված է թագավորը, իշխանության խորհրդանիշը՝ դափնեպսակը ձեռքին, իր վասալների հետ, թախտին կիսապառկած վիճակում[64]։ Այս նույն սովորությունը եղել է նաև հույների և հռոմեացիների մոտ[65]։

Ինչպես վկայում են գրավոր աղբյուրները[66] և ինչպես երևում է Հայաստանում հայտնաբերված վերոհիշյալ կավե արձանիկների վրայի պատկերներից, թախտին կիսապառկած դիրքով մնալու համար եղել են շքեղ, գեղարվեստորեն ձևավորված հատուկ բարձեր։ Հայաստանում գահավորակի և թախտի առջև, ոտքերի տակ դրվող ցածր աթոռներ օգտագործվել են դեռևս ուրարտական շրջանում։ Հետագայում դրանք լայնորեն տարածվել են ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ անտիկ աշխարհում։

Թեև ուրարտական շրջանի և մ. թ. ա. II դարի Հայաստանի կահույքն իրար հետ կապող կիստական նյութեր չունենք, սակայն կասկածից վեր է, որ նախորդ շրջանի ավանդույթները շարունակվել են։ Դա նշանակում է, որ կահույքագործությունը և նրա հետ կապված արհեստները գտնվում էին զարգացման բարձր մակարդակի վրա։ Վերը նշված բարդ ձևավոր ոտքերով (Սիսիան, Երևան), գլխատեղի երեսապատման քանդակազարդ մասեր ունեցող (Մրեն) կամ աղբյուրներում հիշատակված արծաթե կամ ոսկեջրած կահույքի արտադրությանը, բացի հյուսնից, մասնակցում էին մետաղագործության, հատկապես գեղարվեստական մետաղի տարբեր բնագավառների արհեստավորներ։

Մետաղագործությունը Հայաստանում երևան է եկել V—IV հազարամյակում և արդեն ուրարտական շրջանում հասել է զարգացման բարձր աստիճանի։ Այդ են վկայում ինչպես ասորեստանյան տեքստերը, այնպես էլ հնագիտական նյութերը։ Ուրարտական մետաղյա արտադրանքը արտահանվել է

60 Д. Кес. Указ. соч., рис. 140, 150.

61 Д. Кес. Указ. соч., с. 56.

62 Н. И. Сокольский. Указ. соч., с. 90.

63 Г. А. Пугаченкова. Указ. соч., с. 170.

64 R. Ghirshman. Iran Parthians and Sassanians. London, 1962, p. 54, fig. 67

65 Д. Кес. Указ. соч., с. 57.

66 Փաստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Երևան, 1987, IV, 2։

հին աշխարհի շատ երկրներ՝ Մայկոպ (Կելերմես), Սիրիա, Միջագետք (Կարքեմիշ, Ասորեստան), Մարաստան, Իրան, էգեյան աշխարհ, Էտրուրիա[67]։ Հայաստանն ուներ երկաթի, պղնձի, ոսկու, կապարի, անագի և այլ հանքատեսակներ[68], որոնք շահագործվել են մինչև ուրարտական շրջանը և անյուշա շարունակել են շահագործվել նաև հետագայում, այդ թվում նաև անտիկ շրջանում։ Հումքի առկայությունը բազա է ստեղծել մետաղագործության հետագա զարգացման համար։

Արտաշատը, լինելով առևտրական և արհեստագործական խոշոր քաղաք, հանդիսացել է կահույքագործության, շքեղ կահույք արտադրող հիմնական կենտրոններից մեկը։ Այդ մասին է վկայում կահույքի բարդ ձևավոր տարեր ձուլելու դիպսե երկփեղկանի կաղապարի մի փեղկը (պահպանված մասի երկ. 25 սմ, դանդակաձև ուռուցիկ մասի տրամագիծը 10 սմ)։ Այն գտնվել է Արտաշատի VIII բլրի առաջին շինարարական շրջանի շերտից (մ. թ. ա. 180-ական թթ.—մ. թ. 58 թ.)[69]։ Անտիկ շրջանի այդպիսի կաղապար այլ երկրներից մեզ հայտնի չէ։ Կաղապարի գյուտը խոսում է Հայաստանում դեղաբվեստական բրոնզ ձուլելու բարձր մակարդակի մասին, որը մ. թ. ա. II—I դդ. ուներ արվեստի այդ բնագավառում ստեղծված իր ավանդույթները։ Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից և մասնավորապես Արտաշատից[70] ու Սիսիանից[71] հայտնաբերվել են դեղաբվեստական մետաղի բարձրարվեստ շատ նմուշներ[72], հալոյներ, տարբեր տիպի զարդեր ձուլելու կապարներ և այլն։ Ագաթանգեղոսը, խոսելով հեթանոսական աստվածների մասին, ասում է. «...ճարտար ձեռքերով սարքած արձաններ են, մի քանիսը փայտ են, ուրիշները՝ քար, պղնձե, արծաթե, կամ ոսկե»[73]։ Նա նշում է նաև դրանց պատրաստման եղանակները. ոմանք կոփած են, ուրիշները՝ կտրած, ոմանք խարտոցած, ուրիշները ձուլածո[74]։

Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից, հատկապես Արտաշատից հայտնաբերված պղնձե, բրոնզե, արծաթե և ոսկե դեղաբվեստական մետաղի նմուշները ցույց են տալիս Ագաթանգեղոսի վկայության ճշմարտությունը։ Վարպետները կիրառել են տարբեր եղանակներ ու հնարքներ, կռել են, ձուլել, խարտոցել, զրվագել, զոդել, ոսկեջրել, հղկել։ Այդ, ինչպես նաև հարդարման եղանակը, նրբագեղությունը, ոլորուն, հատիկավոր, ֆիլիգրան, փորագրված և մյուս զարդաձևերը ցույց են տալիս վարպետների մասնագիտական բարձր մակարդակը։

Հնագիտական հայտնագործությունները՝ դեղաբվեստական մետաղը և

---

67 Այդ մասին տե՛ս Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 161—164. դրականություններ նույն տեղում։

68 Նույն տեղում, էջ 164։

69 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան. Արտաշատի VIII բլրի շերտագրությունը. «Էրեբունի հասարակական գիտությունների», 1974, № 9, էջ 75, 80։

70 Ռ. Ն. Ամարելյան. Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության (մ. թ. ա. VI դ.—մ. թ. III դ.)։ Երևան, 1976, տախտ. XCIII, XCVI, XCVIII, XCIV; Б. Н. Аракелян. Арташат, I. Основные результаты раскопок 1970—1977 гг. Ереван, 1982, таб. XLIII—XLV; Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանում հայտնաբերված արևմտահոմանական մետաղյա առարկաներ.—«Էրեբունի հասարակական գիտությունների», 1984, № 10, էջ 73։

71 Ж. Д. Хачатрян. Художественные изделия из серебра эллинистического времени. II Международный симпозиум по армянскому искусству. Ереван, 1978, с. 1—11; Ժ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները (մ. թ. ա. II դ.—մ. թ. I դ.).—«Էրեբունի հասարակական գիտությունների», 1978, № 5, էջ 46—56, տախտ. I, II։

72 Ж. Д. Хачатрян. Гарни, У. Античный некрополь (результаты раскопок 1956—1976 гг.), Ереван, 1976, с. 105—106, рис. 41, табл. XX_1.

73 Ագաթանգեղոս, § 71։

74 Նույն տեղում, § 522։

գրավոր աղբյուրները վկայում են տորևտիկայի ծաղկման մասին։ Հայաստանի արքունիքի և վերնախավի աճող պահանջարկը, ճիշտ է, մասամբ բավարարվում էր ներմուծելու եղանակով, սակայն հիմնական բավարարողը տեղացի վարպետներն էին։ Դրա վառ ապացույցը Սիսիանի իշխանական դամբարանն է։

Փայտամշակությունը նույնպես անցել է զարգացման երկար ճանապարհ։ Լճաշենից, Ցամաքաբերդից, Արթիկից, Օշականից և այլ վայրերից հայտնաբերված սայլերը, թախտերը, պատգարակները, ամանեղենը խոսում են փայտյա արտադրանքի մասին։ Ուրարտական շրջանում այն ավելի առատ է և գտնվում է զարգացման նոր աստիճանի վրա։ Կարմիր բլուրում հայտնաբերվել են սղոց և նշանակալից քանակությամբ փայտե առարկաներ՝ գդալներ (օղակաձև պոչով), թիակ, թասիկ, կահույքի մասեր ոսկրե ներդիրներով և այլն, որոնք պատրաստված են հաստոցի վրա[75]։

Փայտամշակության մեջ գոյություն ուներ աշխատանքի բաժանում։ Թեև, երբեմն դժար է ասել, թե արտադրանքի որոշ տեսակներ ում պետք է վերագրել՝ ատաղձագործի՞ն, թե՞ հյուսնին։ Ճիշտ է, նրանք ունեն մի շարք գործիքներ, որոնք ընդհանուր են, սակայն կան նաև տարբեր, իրենց աշխատանքին բնորոշ գործիքներ։ Ատաղձագործությունը սերտորեն կապված էր շինարարության հետ։ Անտիկ շրջանում կային նաև փայտակերտ շինություններ։ Փավստոս Բուզանդը Շապուհ II-ի կողմից քաղաքներն ավերելու և բնակչությանը գերեվարելու մասին խոսելիս հատուկ շեշտում է, որ Արտաշատում «եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն...»[76], Մովսես Խորենացին էլ վկայում է Տիգրանակերտի ավերման ու հրդեհի մասին. «Այլ յունականն ձեռն ի քթթելական հրձիգ առնէր զամենայն փայտակերտսն»[77]։ Քարակերտ շինությունների մեջ կային փայտյա կոնստրուկցիաներ ու հատվածներ։ Ագաթանգեղոսը Արտաշատում գտնվող Անահիտի տաճարի ավերման մասին ասում է. «Եւ ամենայն շինուածք մեհենին ի հիմանց գղրդեալ տապալեցան. և լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհացաւ ի տէրունական նշանին զօրութենէ, և ծուխն ծառացեալ մինչև յամպս հասանէր»[78]։ Բարձր և երկար պատերն ամրացնելու համար փայտե գոտիներ էին անում։ Արդպիսի գոտիներ են հայտնաբերվել Արտաշատի II և VIII բլուրներում եղած պատերի մեջ։ Փայտե կառուցվածքներ օգտագործվում էին նաև պարիսպների, հենապատերի, տնտեսական տարբեր տեսակի շինությունների մեջ։ Հայաստանի լճերում կային նավարկության միջոցներ։ Պարզ է, որ պետք է լինեին նաև նավաշինարարներ, ինչպես նաև կառքեր, ռազմական մեքենաներ պատրաստողներ, որոնք առանձին մասնագիտություններ էին (կառագործ և այլն)։ Կառքի մասին վկայում է Ագաթանգեղոսը։ Նա նշում է. «Եւ հանէին զԳրիգոր յոսկիասպատ կառսն արքունականս՝ սպիտակաձիգ ջորւոցն»[79]։

---

75 Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 195, рис. 55—56:

76 Փավստոս Բուզանդ, IV, 55։

77 Մովսես Խորենացի, III, 38։

78 Ագաթանգեղոս, § 779։

79 Ագաթանգեղոս, § 803։

Կենցաղային ու տնտեսական նշանակության զանազան իրեր ու առարկաներ, այդ թվում նաև դոներ, լուսամուտներ, դաղաղներ, սնդուկներ (ծրխնիավոր կափարիչով և փակով արկղ), տարբեր չափերի արկղներ, սաներ, դարդաուփեր և այլն, պատրաստվում էին հյուսների կողմից, այստեղ էլ կային նեղ մասնագիտացումներ. Անտիկ հուշարձաններից, հատկապես Արտաշատից հայտնաբերվել են դաղաղներ՝ (արևմտյան դամբարանադաշտ), փայտե արկղների տախտակների բեկորներ, անկյունային տախտակներն իրար միացնող երկաթյա թիթեղներ՝ դամերի մնացորդներով։ Սիսիանի դամբարանում գտնվել են սնդուկի տախտակի մասեր (հաստ. 2 սմ) և բրոնզե կիսակլոր (սակրաձև) երեք ծխնի (հաստ. 0,5 սմ, լայն. 5,3 սմ, երկ. 9,3 սմ), դամերի երեք անցքով, Արտաշատի VIII բլրից գտնվել են փայտե (սամշիտե՞) դարդաուփերի լավ մշակված բեկորներ, ոսկրե երկկողմանի սանր, ներկաուփ և այլ մանր առարկաներ։

Հայաստանի անտառները բավարարում էին փայտի պահանջարկը։ Արտաշատի կառուցման մասին խոսելիս Մովսես Խորենացին նշում է, որ «Ամրոցն էլ օգնում է նրան անտառի փայտով»[81]։ Արտաշատում պատի ամրացման համար օգտագործվել են դիհի (можжевельник) դերաններ։ Կաղնու, հաճարենու, մայրիի (սոճու) և այլ ծառատեսակներ օգտագործվում էին ինչպես շինարարության, այնպես էլ կենցաղային իրեր պատրաստելու համար։ Արցախի, Սյունիքի, Դուդարքի անտառների փայտը այսօր էլ է օգտագործվում այդ նպատակներով։ Հայաստանի փայտի արտադրանքն առաջին հերթին բավարարում էր ներքին շուկան։ Այն արտահանելու մասին փաստեր մեզ հայտնի չեն։ Ամենայն հավանականությամբ փայտե զանազան արտադրանք ներմուծվել է Հայաստան, դա վերաբերում էր շքեղ կահույքին, զարդաուփերին և այլն։

Տարբեր նպատակների ծառայող կահույքի հանդես գալը կապված է մարդու նոստալգիայի անցնելու հետ, երբ նա փորձում է իրեն համար ստեղծել տարբերական հարմարություններ։ Սակայն կահույքի լայն տարածումը սկսվում է դասակարգային հասարակության և քաղաքային կյանքի ձևավորման շրջանից[82]։ Կահույքը պատկերացում է տալիս տիրող սոցիալական վիճակի մասին։ Սիսիանից, Արտաշատից և Երևանից հայտնաբերված բարդ ձևավոր ոսքերով կահույքը, ինչպես նաև կավե արձանիկների վրա պատկերված կահույքը, շքեղ կահույք է և պատկանել է վերնախավին։ Այն արտահայտում է Հայաստանի ուշ հելլենիստական և ուշ անտիկ շրջանի հասարակության հակումները, ճաշակը և ընդհանրապես մշակույթի մակարդակը։

Հայասաանի կահույքն իր ձևերով, հարդարանքով, ոճական առանձնահատկություններով ու պատրաստման եղանակով չի զիջում անտիկ աշխարհի մյուս երկրներից հայտնի կահույքին։ Զարգանալով հինարևելյան ընդհանուր միջավայրում, շարունակելով հանդերձ տեղական ավանդական ձևերն ու հարդարանքը, այն շատ ընդհանրություններ ունի մյուս երկրների կահույքի հետ, որն առևտրատնտեսական ու մշակութային սերտ կապերի ար-

80 Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատ II, էջ 19—22։

81 Մովսես Խորենացի, II, 49։

82 П. П. Сокольский. Указ. соч., с. 87.

գյունք է։ Դա խոսում է նաև Հայաստանում փայտամշակության և նրա հետ կապված արհեստների բարձր զարգացման, ինչպես նաև բոլոր արտադրամիջոցների, այն գործիքների առկայության մասին, որ ունեին հելլենիստական և հռոմեական կայսրության մեջ մտնող երկրների փայտամշակությամբ զբաղվող արհեստավորները։ Արտաշատից հայտնաբերվել են երկաթյա կացին, որոշ այլ գործիքներ, որոնք նման են դուրի և ուրագի։

Փայտամշակությամբ զբաղվող արհեստավորները, ատաղձագործները ու հյուսները մյուս արհեստավորների համեմատ ամենաշատն էին։ Պանտիկապեյում ատաղձագործները ու հյուսները, օրինակ, արհեստավորների ամենանշանակալից մասն էին կազմում[83]։ Ոչ մի արհեստ չէր կարող համեմատվել փայտամշակության հետ։ Անտիկ հեղինակներն[84] արհեստների մասին խոսելիս առաջինը նշում էին ատաղձագործներին և հյուսներին։ Հայաստանում, որը քարի երկիր էր և զարգացած մետաղամշակություն ուներ, փայտամշակությամբ զբաղվողների հետ կարող էին համեմատվել, քիչ թե շատ, միայն քարդործները ու մետաղագործները։ Քաղաքային կյանքում հյուսը և ատաղձագործը քարգործ վարպետի հետ համարվում էին ամենաանհրաժեշտ վարպետները[85]։ Փայտամշակությունը ուներ նաև տնտեսական կարևոր նշանակություն, սակայն վատ պահպանվելու պատճառով հնագիտական հայտնագործություններն անբավարար են, որը և թույլ չի տալիս այն ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրել։ Դա հնարավորություն կտար ավելի լավ պատկերացում կազմել Հայաստանի անտիկ շրջանի հոգևոր և նյութական մշակույթի մասին։

МЕБЕЛЬНОЕ ПРОИЗВОДСТВО В АРМЕНИИ
(II в. до н. э.—II в н. э.)

Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

В статье представляется одна из отраслей деревообрабатывающего ремесла—производство мебели в античной Армении. Найденные фрагменты деталей мебели из бронзы, с железным стержнем и из дерева, покрытого бронзовой пластинкой (Арташат, Сисиан, Ереван), дают возможность судить об этой отрасли деревообрабатывающего ремесла. Почти все детали имеют сложную профилировку и тщательно отполированы. Изображения мебели на античных терракотах Армении, а также находки мебели из других стран античного мира позволяют восстановить внешний вид нашей мебели. Это—тахта, кресла, высокий стул и небольшая ножная скамеечка. Обнаруженная в Мере бронзовая обкладка изголовья (погрудное рельефное изображение крылатой женской фигуры и голова собаки) являются фрагментами ложа. Исследуемая парадная мебель изучается на широком фоне античной культуры Армении и сопредельных стран. Все фрагменты мебели Армении —местного производства. Об этом свидетельствует также гипсовая матрица для литья ножек мебели сложной профилировки из Арташата (II—I вн. до н. э.). Изучение материала показывает, что античная мебель Армении создавалась на основе давних местных традиций. В стилистическом и художественном отношении парадная мебель Армении имеет много общего с мебелью эллинистического Востока.

---

83 В. Д. Блаватский. О боспорском ремесле IV—I вв. до н. э.—СА. XXIX, XXX. 1959, с. 45.

84 Плутарх. Перикл, XII.—Избранные жизнеописания, т. I, М., 1987 (пер. С. Соболевского); Н. И. Сокольский. Указ. соч., с. 273, ссылка 2.

85 С. Т. Еремян. Развитие городов..., с. 29.